

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹՈՎԱՄԱՅԱՆ ՄԱՐՏԻՆ ԳԱԳԻԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ 1991-2008 ԹԹ.

ԻԳ.00.04 – «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ТОВМАСЯН МАРТИН ГАГИКОВИЧ

ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С ФЕДЕРАТИВНОЙ РЕСПУБЛИКИ
ГЕРМАНИЯ В 1991-2008 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по
специальности 23.00.04 - “Международные отношения”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН 2023

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գեղամ Հարությունի Պետրոսյան

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝

քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան Տոնիկի Բոչարյան
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գրիգոր Ալեքսանդրի Բալասանյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-Ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2024 թ. հունվարի 17-ին, ժամը 14:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի 056 «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի նիստում: Մասնագիտական խորհրդի հասցեն է՝ ՀՀ, Երևան 0025, Ալեք Մանուկյան 1: Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2023 թ. դեկտեմբերի 14-ին:

ՀՀ ԲՈԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պատմական
գիտությունների թեկնածու, դոցենտ



**Վահրամ Սամվելի
Պետրոսյան**

Тема диссертации утверждена в **Ереванском государственном университете**

Научный руководитель:

доктор исторических наук, профессор
Гегам Арутюнович Петросян

Официальные оппоненты:

доктор политических наук, профессор
Тигран Тоникович Кочарян
кандидат исторических наук, доцент
Григор Александрович Баласанян

Ведущая организация:

Российско-армянский университет

Защита состоится 17 января 2024 г., в 14:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 «Политология и международные отношения» ВАК РА. Адрес: РА, Ереван 0025, ул. А. Манукяна 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 14 декабря 2023 г..

Научный секретарь специализированного
Совета 056 ВАК РА,
кандидат исторических наук, доцент



**Վահրամ Սամվելի
Պետրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետության արտաքին բազմավեկտոր քաղաքականության մեջ առանձնակի կարևորություն ունի Եվրոպական ուղղությունը: Այս համատեքստում հատուկ նշանակություն ունի Եվրոպական Միության կորիզը կազմող Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ հարաբերությունները, որի ուսումնասիրմանն էլ նվիրված է ներկայացվող աշխատանքը: Խորհրդային Միության փլուզումից հետո վերամիավորված Գերմանիան ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը և հաստատվեցին երկկողմ դիվանագիտական հարաբերություններ:

Հայաստանի Հանրապետության համար հատուկ նշանակություն ունի Գերմանիայի հետ հարաբերությունների զարգացումը, որը անկախության հաստատման առաջին տարիներից ուշադիր հետևում էր Հարավային Կովկասում, այդ թվում՝ Հայաստանում տեղի ունեցող զարգացումներին և գործընթացներին: Ազատ շուկայական հարաբերությունների ձևավորման, քաղաքացիական հասարակության կառուցման և ժողովրդավարական գործընթացների հաջող իրականացման համար Հայաստանին անհրաժեշտ էր ոչ միայն ստանալ Եվրոպական Միության «շարժիչը» հանդիսացող, ՆԱՏՕ-ի անդամ և Մեծ ութնյակի երկիր Գերմանիայի աջակցությունն ու օժանդակությունը, այլև գերմանական հաջողված փորձը կիրառել Հայաստանում: Բացի այդ, Գերմանիան ծանրակշիռ դերակատարություն ունի համաշխարհային քաղաքականության մեջ, որի հետ հարաբերությունների սերտացումը առաջին հերթին բխում է Հայաստանի Հանրապետության շահերից: Պաշտոնական Երևանը նախևառաջ պետք է փորձեր Գերմանիայի բազում արտաքին քաղաքական խնդիրների օրակարգում ներառել Հայաստանին վերաբերող հարցերը:

Հետազոտվող թեման խիստ արդիական է նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության արդի օրակարգի չափումների տեսանկյունից: Գերմանիան ունի բավականին հավասարակշռված դիրքորոշում հայ-ադրբեջանական հակամարտության հարցում ընդհանրապես և Ղարաբաղյան հիմնախնդրում՝ մասնավորապես: Գերմանիայում կա մեծաթիվ հայկական համայնք, որն ունի մեծ ներուժ՝ երկրում ազդեցիկ լրբինգ կիրառելու: Մյուս կողմից էլ, վերջին տարիներին ակտիվորեն զարգանում են Հայաստանի հարաբերությունները Եվրոպական Միության հետ, ուստի այս կազմակերպության գլխավոր ուժային կենտրոններից մեկի հետ հարաբերությունների ուսումնասիրությունն այս առումով ևս անհրաժեշտություն է:

Սույն հետազոտությունը հնարավորություն կտա ավելի հստակ պատկերացնելու ՀՀ-ԳԴՀ հարաբերությունների հաստատման հիմքերը, երկկողմ

հարաբերությունների ներկա վիճակը, վերլուծելու դրանց զարգացման հեռանկարները, ունենալու երկկողմ հարաբերությունների գրեթե բոլոր ոլորտներն ընդգրկող կիրառական նյութ: Հետազոտության գլխավոր գործնական բաղադրիչը կայանում է նրանում, որ այն հնարավորություն կտա ՀՀ պետական և ոչ պետական մարմիններին ՀՀ-ԳԴՀ հարաբերություններին վերաբերող ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթերի, ինչպես նաև քաղաքականության մշակման գործում ունենալ երկկողմ հարաբերությունների ուսումնասիրվող ժամանակահատվածն ընդգրկող համապարփակ աշխատություն:

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանը:

Մեր ուսումնասիրության ընթացքում լայնորեն կիրառել ենք արխիվային փաստաթղթեր, ինչպես ՀՀ արխիվներից, այնպես էլ՝ Գերմանիայի: Երկկողմ հարաբերությունների ամենօրյա ընթացքն ուսումնասիրելու և մեկնաբանելու տեսանկյունից կարևորել ենք նաև ժամանակի մամուլի ուսումնասիրությունը: Գերմանական աղբյուրների ուսումնասիրման մեջ մեծ է Գերմանիայի Բունդեսթագի՝ աշխարհում երրորդ խոշոր խորհրդարանական գրադարանի հարուստ փաստագրական նյութերը: Քաղաքական հարաբերությունների զարգացման նկարագրի և վերլուծության համար հիմք են հանդիսացել Հայաստանի ազգային արխիվի¹ և ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական բաժնի², ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի և ԱԳՆ Եվրոպայի վարչության ընթացիկ նյութերը: Օգտագործվել են նաև Գերմանիայի Բունդեսթագի բանաձևերը և մասնավորապես Հարավային Կովկասին վերաբերող փաստաթղթեր, ինչպես նաև գերմանական մի շարք պարբերականներ, ինչպիսիք են՝ Süddeutsche Zeitung³ (Չյուդդոյչե ցայթունգ), Frankfurter Rundschau (Ֆրանկֆուրտեր ռունդշաու)⁴, Frankfurter Allgemeine Zeitung (Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգ)⁵, Դի վելթ (Die Welt)⁶ և մի շարք

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 326:

² ՀՀ արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական բաժնի նյութեր, գ. 9, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 197:

³ Bonner Parteien für Anerkennung Armeniens, Süddeutsche Zeitung, München, 11.12.1991, Armenier Stimmen für Unabhängigkeit, Süddeutsche Zeitung, München, 23.11.1991.

⁴ Bonn sieht weg im Kaukasus, Gemma Pörzgen, Frankfurter Rundschau 09.09.1993, Frankfurter Rundschau 05.12.1991.

⁵ Völkermord im Lehrplan. Die armen Schüler, 07.08.2009, <http://www.faz.net/aktuell/feuilleton/voelkermord-im-lehrplan-die-armen-schueler-1838263.html>, 09.03.2015.

այլ պարբերականները: Հայկական մամուլի հրապարակումներից հատուկ կարևորություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետություն⁷ և Ազգ օրաթերթերի⁸ հայ-գերմանական հարաբերություններին առնչվող բազմաթիվ հրապարակումները:

Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ Գերմանիայի դիրքորոշումն ուսումնասիրելիս կարևորում ենք Boner Rundschau⁹ (Բոներ Ռունդշաու)-ում հրապարակված նյութերը, Գերմանիայի Գիտության և Քաղաքականության (SWP) հիմնադրամի հետազոտությունները, Բունդեսթագի մի շարք բանաձևեր և ԳԴՀ Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքում տեղ գտած «Գերմանիայի դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ»: Հայ-գերմանական առևտրատնտեսական հարաբերությունների ուսումնասիրման համար օգտագործվել են մի շարք հեղինակների՝ ինչպիսիք են՝ Погорлецкий¹⁰, Бжезинский¹¹, Нартов¹², Гаджиев¹³ հեղինակած աշխատությունները: Գերմանիայի Արտաքին քաղաքականության հիմնադրամի (DGAP)-ի հոդվածները¹⁴ և Գերմանիայի Միջազգային համագործակցության կազմակերպության (GIZ) տեղեկատվական հրապարակումները հնարավորություն են տվել վերլուծելու երկկողմ առևտրատնտեսական կապերը և դրանց հեռանկարները, Համաշխարհային բանկի և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները հիմք են հանդիսացել երկկողմ առևտրատնտեսական կապերի ընդգրկում մակարդակը ներկայացնելու տեսանկյունից: Հայ-գերմանական միջխորհրդարանական հարաբերությունների վերհանման գործում խորհրդարանների համագործակցության մասին արժանահիշատակ աղբյուրներ են Հարավային Կովկասի նկատմամբ Բունդեսթագի հայտնած դիրքորոշումները, բանաձևերը:

⁶ Die Welt, Fischer wirbt für Kompromissbereitschaft im Südkaukasus, von AP, 24.04.2004.

⁷ Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, հ. 1992, 1996, 1998, 2004:

⁸ Ազգ օրաթերթ, հ. 2004, 2005, 2007:

⁹ Waffen aus Deutschland in Berg - Karabach eingesetzt? Bonner Rundschau, 04.02.1994.

¹⁰ Погорлецкий А., Экономика зарубежных стран, Второе издание, - СПб, Изд-во Михайлова, 2001.

¹¹ Бжезинский З., Великая шахматная доска, Москва, Международные отношения, 1999.

¹² Нартов Н., Геополитика, Учебник для вузов, М., Юнити, 1999.

¹³ Гаджиев К., Геополитика Кавказа, М., Международные отношения, 2001.

¹⁴ Meister S., Recalibrating Germany's and EU's Policy in the South Caucasus, DGAP analyze, July 2010, № 2:

Գերմանիայի հայ համայնքի, հայ-գերմական մշակութային և գիտական համագործակցության և Գերմանիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ուսումնասիրման համար հիմք են հանդիսացել Քյոլնում հրատարակվող Deutsch-Armenisches Korrespondenz ամսագիրը¹⁵, Ազատ Օրդուխանյանի¹⁶, Մարիկե Դրուզեի¹⁷, Սերգեյ Սումյունի¹⁸ հեղինակած հոդվածները:

Հայ-գերմական հարաբերությունների վերաբերյալ վերլուծական գրականության սակավության պարագայում վերլուծությունների համար հիմք են հանդիսացել հիմնականում Հայաստանի ազգային արխիվի և ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժնի, ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչության և ՀՀ Ազգային ժողովի ընթացիկ նյութերը, որոնք հնարավորություն ընձեռեցին համալիր ներկայացնել երկկողմ համագործակցության տարբեր ոլորտները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ արտաքին քաղաքականության եվրոպական ուղղության կարևոր մաս կազմող հայ-գերմական հարաբերությունների ուսումնասիրությունն է 1991-2008 թթ. ընդգրկող ժամանակահատվածում: Մեր առջև դրված նպատակին հասնելու համար առաջադրվել և փորձ է արվել լուծել հետևյալ առաջնային կարևորության խնդիրները.

- վեր հանել հայ-գերմական հարաբերությունների ձևավորման և զարգացման պատմաքաղաքական հիմքերը, դրանք կառուցող սկզբունքները, զարգացման դինամիկան,

- ուսումնասիրել հայ-գերմական համագործակցությունը հետևյալ ոլորտներում՝ քաղաքական, առևտրատնտեսական, ինչպես նաև կրթության, գիտության և մշակույթի ոլորտներում և գնահատել ձեռք բերված արդյունքները երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարների դիտարկման համատեքստում,

- կատարել երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման վերաբերյալ սցենարային վերլուծություններ,

- գնահատել Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային

¹⁵ Vor 20 Jahre gegründet. Deutsch-armenische Korrespondenz, Nr. 98, Jg.1997, Heft 4.

¹⁶ Ordukhanyan A., Armenier in deutschland, Geschichte und Gegenwart, Vortrag am 19. April 2008 in Erfurt, herausgeber: Der Ausländerbeauftragte beim Thüringer Ministerium für Soziales, Familie und Gesundheit.

¹⁷ Dreusse M., Die armenische Diaspora in Deutschland, Ihr Beitrag zur Entwicklung Armeniens, Frankfurt a. M.2008.

¹⁸ Սումյունի Ս., Գերմանիայի հայ սփյուռքը «21-րդ ԴԱՐ» ամսագիր, թ. 3 (13), 2006:

Հանրապետության միջև առևտրատնտեսական կապերի ձևավորման և զարգացման հիմքերը, դրանց հիմնական բաղադրիչները,

- վեր հանել Գերմանիայի դիրքորոշումը Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ,

- ուսումնասիրել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում,

- ուսումնասիրել Գերմանիայի հայ համայնքին առնչվող հիմնախնդիրները և հայ համայնքի դերը երկկողմ հարաբերությունների զարգացման գործում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև միջպետական փոխհարաբերություններն են: Ուսումնասիրության առարկան երկկողմ հարաբերությունների տարբեր ոլորտներին, մասնավորապես՝ առևտրատնտեսական, քաղաքական, մշակութային և երկկողմ քննարկման առարկա հանդիսացած մյուս ոլորտներին առնչվող հարցերն են:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Հաշվի առնելով թեմայի առանձնահատկությունները և նպատակները՝ կիրառել ենք հետազոտության ինչպես ընդհանուր գիտական (դիալեկտիկական, համակարգային, պատմական), այնպես էլ՝ մասնավոր կամ հատուկ (համեմատական, վերլուծական տրամաբանական, վիճակագրական) մեթոդներ: Սույն փոխկապակցված մեթոդների կիրառումը նպատակ է հետապնդել ապահովել հետազոտության և առանձին վերցրած դրա գիտական արդյունքների օբյեկտիվությունն ու արժանահավատությունը:

Երկկողմ քաղաքական ու տնտեսական հարաբերությունների զարգացման դինամիկան ուսումնասիրելու և վերլուծելու տեսանկյունից լայնորեն կիրառել ենք բովանդակային և իրադարձային վերլուծության մեթոդները: Քննադատական վերլուծության մեթոդը հիմնականում կիրառել ենք Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ Գերմանիայի Դաշնային Հանրապետության դիրքորոշման ներկայացման և Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգում տեղ գտած կարևորագույն հիմնախնդիրների՝ պաշտոնական Բեռլինի մոտեցումները մեկնաբանելու ընթացքում:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում փորձ է կատարվել 1991թ.-ից մինչև 2008թ. ընկած ժամանակահատվածում ընդգրկուն կերպով ներկայացնել ՀՀ-ԳԴՀ միջպետական փոխհարաբերությունների զարգացման դինամիկան, վեր հանել, վերլուծել դրանց հիմնական ուղղություններն ու դրսևորումները, ձևավորման հիմքերը, զարգացման միտումները, խոչընդոտներն ու խնդիրները, առկա ներուժը և հեռանակարները: Աշխատանքում առաջին անգամ գիտական շրջանակներին է ներկայացվում Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության

միջև հարաբերությունների թեման համապարփակ ձևով՝ հիմքում ունենալով աղբյուրագիտական այնպիսի նյութեր, որոնք դեռևս շրջանառության մեջ չեն եղել: Հայ-գերմանական հարաբերությունները տարանջատում ենք զարգացման երեք փուլերի՝ ճանաչողական, անցումային և զարգացման, որոնք ներկայացվել են ողջ ուսումնասիրության ընթացքում:

Աշխատանքի հետազոտական հենքը ընդգրկում է հայ-գերմանական համագործակցության գրեթե բոլոր ոլորտները, ինչը հնարավորություն է ընձեռում լիարժեք պատկերացում կազմել ներկայիս համագործակցության մակարդակի մասին և հանդիսանում է կայուն հիմք՝ հետագա ռազմավարության մշակման և պլանավորման համար: Փոխգործակցության հիմնական ոլորտները, որոնք են քաղաքական և դիվանագիտական երկխոսության ձևավորումն ու զարգացումը, տնտեսական համագործակցությունը, առևտրային կապերը, ՀՀ-ում ԳԴՀ ներդրումային քաղաքականությունը, կրթամշակութային գործակցությունը, հիմք են հանդիսացել և ծանրակշիռ ազդեցություն ունեցել երկկողմ գործակցության համար:

Առանձնակի կարևորությամբ շեշտվել և մանրամասնորեն ուսումնասիրվել է երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները, ինչը հստակ ներկայացնում է գերմանական քաղաքական և տնտեսական հետաքրքրությունները Հայաստանում, ինչպես նաև հայկական կողմին հնարավորություն ընձեռում հստակ պատկերացնելու, թե որ ոլորտներն են առավել գրավիչ գերմանական ներդրումների համար:

Ուսումնասիրության մեջ առանձնակի կարևորությամբ շեշտադրվել է նաև Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում Գերմանիայի դիրքորոշմանն ու ներգրավվածությանն առնչվող հարցերը: Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1991-2008թթ. ընկած ժամանակահատվածը: Ընտրված ժամանակահատվածի համար որպես սկիզբ ընտրված է 1991 թվականը, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման և Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման մեկնարկով: Խորհրդային Միության փլուզման հետևանքով ստեղծվեց նոր աշխարհակարգ. Հայաստանը վերահաստատեց իր անկախ պետականությունը, իսկ Գերմանիայի վերամիավորմամբ ստեղծվեց Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, և այս ամենը հիմք հանդիսացավ երկկողմ հարաբերությունների ձևավորման համար: Աշխատության ուսումնասիրությունը հասցվել է մինչև 2008 թվականը, ինչը պայմանավորված է Հայաստանում 2008թ. նախագահի փոփոխությունով, իսկ Գերմանիայում՝ 2009թ. Բունդետթագի ընտրություններով: Իհարկե, որոշ հարցերի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում տալու և ուսումնասիրությունը համապարփակ դարձնելու նկատառումից ելնելով, աշխատությունում անդրադարձել ենք նաև 2008 թվականին հաջորդող որոշ իրադարձությունների:

Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության ընթացքում ձևավորված հիմնական դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտագործվել ՀՀ արտաքին գործերի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, ՀՀ Ազգային ժողովի, Գերմանիայի Արտաքին գործերի, Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման (BMZ) նախարարությունների, Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպության (GIZ), ինչպես նաև Բունդեսթագի կողմից: Հետազոտության արդյունքները կարող են կիրառելի լինել ՀՀ արտաքին քաղաքականությամբ, պատմությամբ, Գերմանիայի արտաքին քաղաքականությամբ զբաղվողների, գիտական առավել լայն շրջանակների, հետազոտողների կողմից: Աշխատանքը կարող է գիտավերլուծական հիմք հանդիսանալ հայ-գերմանական հարաբերություններին վերաբերող դիրքորոշումներ ձևակերպելու, հարաբերությունների հետագա զարգացման ուղղությունների մշակման տեսանկյունից:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսությունը կատարվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ու դիվանագիտության ամբիոնում: Ատենախոսության թեմայով հեղինակը հրատարակել է յոթ գիտական հոդվածներ, ինչպես նաև համահեղինակ է մեկ կոլեկտիվ մենագրության, որը նվիրված է Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման երեսուն ամյակին: Հրատարակված հոդվածները ներկայացվել են տարբեր գիտաժողովների ընթացքում:

Հեղինակը բազմիցս մասնակցել է Բունդեսթագի կողմից Գերմանիայում կազմակերպված թեմատիկ քննարկումների, որոնց ընթացքում ներկայացրել է նաև իր հետազոտությունների արդյունքները՝ հետագայում դրանք ընդգրկելով ատենախոսության մեջ

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 180 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված է խնդրի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, աշխատանքի գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Հայաստանի Հանրապետության և

Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև քաղաքական հարաբերությունների կայացման և զարգացման գործընթացը» վերնագրով, նվիրել ենք Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև քաղաքական փոխհարաբերությունների ձևավորման, դրանց զարգացման գործընթացի ուսումնասիրությանը: Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև հարաբերություններն ի սկզբանե դրվեցին բավականին ամուր հողի վրա: Այդ ամրությունը պայմանավորվում էր ինչպես տարածաշրջանում և Հայաստանի նկատմամբ Գերմանիայի ցուցաբերած հետաքրքրությամբ, երկկողմ քաղաքական կապերի հաստատումով, այնպես էլ՝ տնտեսական ու մշակութային ոլորտներում կապերի ակտիվացումով: Անդրադարձ է կատարվել դիվանագիտական հարաբերությունների կայացումից մինչև երկկողմ քաղաքական փոխհարաբերությունների օրակարգում տեղ գտած առանձին կարևոր հիմնախնդիրների:

Ուսումնասիրությունը փորձել ենք հենել զարգացման դինամիկայի մեկնաբանության հիմքերի վրա: Այս գլխում ներկայացրել ենք նաև Ղարաբաղյան հիմնախնդրում պաշտոնական Բեռլինի քաղաքականությունն ու դիրքորոշումը ձևավորող հիմնական սկզբունքները: Եթե փորձենք հակիրճ գնահատել ներկայացված փուլում հայ-գերմանական հարաբերությունների զարգացման դինամիկան, կարող ենք փաստել, որ դրանցում բավականին առաջընթաց է եղել: Երկու երկրների միջև ձևավորված համագործակցությունը աստիճանաբար ընդլայնեց իր ոլորտային ընդգրկվածությունը՝ ներառելով ինչպես քաղաքականն ու տնտեսականը, այնպես էլ՝ հումանիտար, հոգևոր-մշակութային, գիտակրթական ոլորտները: Գերմանիան հետզհետե ակտիվացավ նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում մեծ կարևորություն ունեցող հարցերում, ինչը կարևոր ցուցիչ է Հայաստանում տվյալ պետության հետաքրքրությունների չափման ու գնահատման տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ, հայ-գերմանական հարաբերությունների երկրորդ փուլը նոր ազդակներ և լիցքեր հաղորդեց երկկողմ հարաբերություններին և նոր հնարավորություններ ստեղծեց դրանց հետագա զարգացման համար: Իսկ Ղարաբաղյան հիմնախնդրի առնչությամբ, Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ Գերմանիայի դիրքորոշումն ամբողջականանում է ԳԴՀ Արտաքին գործերի նախարարության կայքում հայ-գերմանական երկկողմ հարաբերությունների բնութագրման մեջ Ղարաբաղի հարցում Գերմանիայի դիրքորոշմամբ: Գերմանիան աջակցում է Ղարաբաղյան հակամարտության գործընթացում Մինսկի խմբի համանախագահների՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև բանակցային ջանքերին և կոչ անում երկու կողմերին դետևակալացիայի և հուժկու փոխզիջումների պատրաստակամության: Այսպիսով, չնայած Գերմանիան չունի հստակ ռազմավարական նպատակներ տարածաշրջանում և չունի

Ղարաբաղյան խնդրի կարգավորման գործում անմիջական դերակատարություն, սակայն Գերմանիան աջակցում է Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղաղության և կայունության պահպանմանը:

Իսկ Ղարաբաղյան հիմնախնդրում Գերմանիայի դիրքորոշումը տեղավորվում է հակամարտությունների կարգավորման ԵՄ քաղաքականության շրջանակներում ձևավորված մոտեցման մեջ. հակամարտությունն անհրաժեշտ է կարգավորել էական փոխզիջումների և տնտեսական ինտեգրացիայի միջոցով:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ վերնագրված «Հայ-գերմանական համագործակցությունն ընդգրկող ոլորտները», նվիրել ենք ՀՀ-Գերմանիա երկկողմ հարաբերությունների տարբեր ոլորտներն ընդգրկող հարցերի ուսումնասիրությանը: Մասնավորապես, առաջին ենթագլխում՝ «Հայ-գերմանական առևտրատնտեսական համագործակցությունը», խոսել ենք երկկողմ առևտրաշրջանառության, տնտեսական հարաբերություններն ընդգրկող տարբեր ոլորտների մասին: Այս գլխի երկրորդ ենթագլխում՝ «Հայ-գերմանական միջխորհրդարանական հարաբերությունները», խոսել ենք երկու երկրների միջև առկա խորհրդարանական կապերի մասին: Նշենք, որ Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ Բունդեսթագն ունի կարևոր գործառնություններ:

Հայաստանի Հանրապետությունն հանդիսանում է խորհրդարանական հանրապետություն, ուստի երկու երկրների միջև ձևավորված խորհրդարանական դիվանագիտության ավանդույթները կարող են լավ նախադրյալներ ստեղծել այս ուղղությամբ հետագա զարգացումների համար: Հայ-գերմանական տնտեսական համագործակցությունը ՀՀ անկախացման սկզբնական շրջանում աչքի չի ընկել ինտենսիվության բարձր մակարդակով, և ընդհուպ մինչև 2000-ական թթ. սկիզբը դրսևորվել է հիմնականում Գերմանիայի կողմից Հայաստանին տրամադրվող ֆինանսական և տեխնիկական օժանդակության տեսքով, ինչը, չնայած որ մեծ օժանդակություն էր ՀՀ տնտեսությանը անցումային շրջանի վերափոխումների իրականացման գործընթացում, սակայն բավարար չէր արդյունավետ առևտրաշրջանառության և գործընկերային հարաբերությունների ձևավորման համար: Երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը մեծ ազդակ հաղորդեցին հատկապես «Կովկասյան նախաձեռնության» շրջանակներում իրականացված փոքր և միջին ձեռնարկատիրության ու բանկային հատվածի աջակցության ծրագրերը, ինչպես նաև միջպետական այցերի հաճախականության ակտիվացումը, որի սկիզբը դրվեց 2003թ. ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի Գերմանիա կատարած պաշտոնական այցով, որը ՀՀ նախագահի առաջին պաշտոնական այցն էր ԳԴՀ:

ՀՀ և ԳԴՀ տնտեսական համագործակցության շրջանակներում բեկումնային էր հատկապես 2004թ., որի ընթացքում տեղի ունեցավ հայ-գերմանական խոշոր գործարար համաժողով, ինչին հաջորդեց գերմանական

կապիտալի զգալի ներհոսք դեպի ՀՀ տնտեսություն, մասնավորապես՝ ՀՀ հանքարդյունաբերության հսկայի՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում գերմանական «Քրոնիմետ» ընկերության իրականացրած խոշոր ներդրման հաշվին: Միաժամանակ, նկատվեց նաև առևտրաշրջանառության աշխուժացում, ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ոլորտներում: 2008թ. դրությամբ Հայաստանում գործում էին գերմանական կապիտալով 100-ից ավելի ընկերություններ, այդ թվում՝ համաշխարհային ճանաչում ունեցող մի շարք ընկերությունների ներկայացուցչություններ, զգալիորեն ավելացել էին ապրանքաշրջանառության ծավալները: Այնուամենայնիվ, տարածաշրջանում ԳԴՀ-ի հետ տնտեսական համագործակցության բնագավառում, մի շարք օբյեկտիվ գործոններով պայմանավորված, ՀՀ-ն դեռևս շարունակում էր զիջել հարևան Վրաստանին և Ադրբեջանին:

Կարծում ենք, 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հզոր հարվածի արդյունքում ՀՀ տնտեսության խոր անկմանը հաջորդած տնտեսական աճի ցուցանիշների վերականգնումը և ներդրումային դաշտի բարելավմանն ուղղված միջոցառումների շարունակական իրականացումը հնարավորություն տվեցին ավելի խորացնելու արդեն իսկ սկզբնավորված արդյունավետ համագործակցության հիմքերը և լիարժեք օգտագործել դրա համար առկա խոստումնալից պոտենցիալը: Իր հերթին, խոսելով հայ-գերմանական միջխորհրդարանական հարաբերությունների մասին, պետք է նշել, որ հնարավորություն կա առկա համագործակցությունը խորացնելու համար, քանի որ գերմանական կողմը պատրաստ է աջակցել համագործակցությունն ընդլայնող յուրաքանչյուր նախաձեռնության: Մենք կարծում ենք, որ երկու գերատեսչությունների միջև շփումների ակտիվացումը անհրաժեշտություն է և կարևորում ենք, որ գերմանացի խորհրդարանականների հետ յուրաքանչյուր հանդիպում կազմակերպվի այնպես, որ հայկական կողմը արտահայտի որոշակի խնդրի հետ կապված հստակ և համոզիչ դիրքորոշում, քանի որ այդ հանդիպումների արդյունքները օգտագործվում են գերմանական կառավարող շրջանակների կողմից:

Բացի միջխորհրդարանական խմբի համատեղ աշխատանքից, կարծում ենք, որ անհրաժեշտություն է Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության և Բունդեսթագի միջև կապերի աշխուժացումը, նոր կապեր հաստատելը Բունդեսթագի տարբեր պատգամավորների հետ, նրանց հրավիրելը Հայաստանին վերաբերող տարբեր միջոցառումների: Քանի որ Գերմանիայի Բունդեսթագի պատգամավորները բավականին լավ են կազմակերպում ընտրատարածքների հետ կապը, կարծում ենք, որ այդ ուղղությամբ բարենպաստ կլինի, որ հայ պատգամավորները Գերմանիա կատարած այցերի ժամանակ ծանոթանան այդ գործընթացին և գերմանացի պատգամավորների խորհրդարանական գործունեությանը: Խորհրդարանական համատեքստում մեծ նշանակություն կարող է ունենալ Գերմանիայի

խորհրդարանում գործող մարմինների նմանությամբ ՀՀ Ազգային ժողովում ձևավորել նմանօրինակ մարմիններ՝ օրինակ՝ Գիտական ծառայություն, որը Գերմանիայի Բունդեսբանկում գործում է՝ աջակցելով պատգամավորների և խորհրդարանի աշխատանքներին՝ ապահովելով տարբեր թեմաների վերաբերյալ գիտական և տեղեկատվական հարուստ նյութերով:

Կարծում ենք, որ հայ-գերմանական միջխորհրդարանական շփումները զարգանում են դրական կողմնորոշմամբ, սակայն անհրաժեշտ է համագործակցությունն ավելի ընդլայնել, կապեր հաստատել Գերմանիայի տարբեր երկրամասերի Լանդթագների հետ, ինչը կնպաստի Հայաստանի խորհրդարանական ժողովրդավարության ամրապնդմանը և զարգացմանը: Հայաստանում խորհրդարանական կառավարման համակարգի անցնելուց հետո այս առումով հեռանկարներն ավելի են ընդլայնվել: Ոչ պակաս կարևոր ենք համարում նաև մշակութային կապերը, որոնք կարող են լավ նախադրյալներ ստեղծել քաղաքական հարաբերությունների զարգացման համար: Ուստի, մեր առենախոսության երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը՝ **«Հայ-գերմանական համագործակցությունը մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում»** վերնագրով, ամբողջությամբ նվիրել ենք երկկողմ մշակութային փոխհարաբերությունների ուսումնասիրությանը:

Հայ-գերմանական հարաբերությունների հաստատմամբ 1991թ. սկսեցին սկզբնավորվել համագործակցություններ մշակույթի, գիտության և կրթության բնագավառներում: Հայ-գերմանական մշակութային և գիտակրթական համագործակցության ուսումնասիրության համար կարևոր հիմք է հանդիսանում Գերմանիայի մշակութային և կրթական քաղաքականության հակիրճ ուսումնասիրությունը, որը հնարավորություն է տալիս հստակ պատկերացնելու առկա համագործակցության մակարդակը և հետագայում նոր ուղղությամբ այն շարունակելու հնարավորությունները: Գերմանիայի մշակութային և կրթական քաղաքականությունը հանդիսանում է Գերմանիայի արտաքին քաղաքականության երեք հիմնական բաղադրիչներից մեկը՝ արտաքին քաղաքականության և արտաքին տնտեսական քաղաքականության հետ մեկտեղ:

Ամփոփելով հայ գերմանական համագործակցությունը մշակույթի, կրթության և գիտության ոլորտներում, պետք է փաստել, որ այս ոլորտում առավել բարեհաջող և ակտիվ համագործակցություն է իրականացվում: Այն հնարավորություն է տալիս երկուստեք ծանոթանալու միմյանց մշակութային արժեքներին, հնարավորություն տալիս համատեղ գիտական աշխատանքների իրականացման և կրթության զարգացման համար լայն հեռանկարների բացման առումներով: Ուշագրավ է այն փաստը, որ Գերմանիան ունի հստակ մշակված քաղաքականություն մշակույթի, գիտության և կրթության բնագավառում ԱՊՀ երկրների նկատմամբ, ուստի մեր խնդիրն է փորձել ավելի հստակ ուղղություններով իրականացնել այդ համագործակցությունը: Կրթության ու

գիտության ոլորտները հանդիսանում են Գերմանիայի փափուկ ուժի քաղաքականության կարևորագույն գործիքներից, որոնց ուղղությամբ Բեռլինը մեծ ռեսուրսներ է ծախսում: Կարծում ենք, որ անհրաժեշտ է ոչ միայն օգտվել ստեղծված հնարավորություններից, այլև՝ այս հարցում առավել նախաձեռնողական լինել:

Ատենախոսության երրորդ գլխի՝ «Հայերը Գերմանիայում և Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը» առաջին մասում, վերնագրված **«Գերմանիայի հայ համայնքը»**, ներկայացրել ենք Գերմանիայի հայ համայնքին առնչվող հիմնախնդիրները: Առանձնակի ուշադրություն ենք դարձրել այն հիմնախնդրին, թե ինչպես է ազդում Գերմանիայի հայ համայնքը ՀՀ-Գերմանիա հարաբերությունների զարգացման վրա: **Երկրորդ ենթագլխում՝ «Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը Գերմանիայի խորհրդարանում»**, խոսել ենք Գերմանիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի ու այս հարցում Գերմանիայի տարբեր մարմիններում եղած քննարկումների մասին: Գերմանիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է 2016թ., սակայն մինչ այս հարցն անցել է ներքաղաքական քննարկումների երկարատև գործընթացի միջով:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ձևավորվել և գնալով ավելի է զարգանում հայ համայնքը, որը կազմավորվել է հիմնականում մերձավորարևելյան և հետխորհրդային երկրներից Գերմանիայում հանգրվանած հայերով: Չնայած Գերմանիայում հայերը սակավաթվ են, այնուամենայնիվ, հասարակական-քաղաքական կյանքում օրեցօր ակտիվանում է նրանց դերը, ինչը պայմանավորված է դաշնային իշխանությունների հետ հայերի ունեցած բարյացկամ վերաբերմունքով: Գերմանիայում հայ համայնքի ջանքերով ստեղծվել է մի ամուր ու կայուն կազմակերպչական կառույց, որը համարձակ քայլերով վերելք է ապրում:

Ճիշտ է, հայ համայնքը այնքան էլ մեծ չէ՝ համեմատած թուրքական համայնքի հետ, այնուամենայնիվ, այն բավականին ծանրակշիռ դեր ու ազդեցություն ունի. օրինակ՝ Հայոց ցեղասպանության հարցում այս երկու կողմերի ուժերը, կարելի է ասել, գրեթե հավասար են: Թուրքիան, շահագրգռված լինելով անդամակցել Եվրամիությանը, պատրաստ էր գնալ որոշակի զիջումների, ինչը բերում է նրա դիրքերի թուլացմանը. ստեղծված իրավիճակից տեղի հայերը կարողանում են օգուտներ քաղել և ամրացնել իրենց դիրքերը: Եվ պետք է փաստել, որ Գերմանիայի հայ համայնքը բավականին ակտիվ և արդյունավետ գործունեություն է ծավալում՝ ապահովելով համայնքի կայունությունը, ակտիվ մասնակցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքին:

Վստահ ենք, որ հայկական համայնքը կարող է ունենալ բավականաչափ ներուժ հայ-գերմանական հարաբերություններում դրական ներգործություն ունենալու համար: Այս առումով կարևորում ենք նաև վերջինիս հետ

Հայաստանի Հանրապետության կողմից տարվող աշխատանքները: Հայոց ցեղասպանության թեման հայ-գերմանական հարաբերություններում ունի իր հատուկ նշանակությունը և հարաբերությունների հաստատման առաջին տարիներից եղել է տարբեր հարթակներում քննարկման բուռն առարկա:

Գերմանիայում Հայոց ցեղասպանության թեմայի վերաբերյալ մինչև 2010-ական թվականները գերմանական իշխող շրջանակները տալիս էին հիմնականում ավանդական դարձած պատասխաններ, որ խնդիրը պատմագետների և հայ-թուրքական երկխոսության առանցքում է՝ ձեռնպահ մնալով հարցի շուրջ հստակ ձևակերպումներ տալուց՝ պայմանավորված թուրք-գերմանական դաշնակցային հարաբերությունների տեսանկյունից: Սակայն ժամանակի ընթացքում գերմանական հանրության շրջանակներում Հայոց ցեղասպանության թեմայի քննարկումներում պարբերաբար խոսվում էր նաև Գերմանիայի համապատասխանատվության մասին: Գերմանիայի համապատասխանատվության տեսանկյունից երկրի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը ուներ նաև այդ քննարկումները դիսկուրսից դուրս մղելու նշանակություն: Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրության առանցքում դրել ենք խորհրդարանական հարթակում ցեղասպանության ճանաչման գործընթացը:

Շուրջ հարյուր տարի պահանջվեց Գերմանիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման համար: Այս քայլը մի կողմից ազդակ էր Թուրքիային, որ Գերմանիան այս հարցում չի կաշկանդվում վերջինիս մոտեցումներով, մյուս կողմից, հաշվի առնելով Գերմանիայի դառը անցյալը, միջազգային հանրության առջև համամարդկային արժեքների դրսևորման միջոց էր: Կարծում ենք նաև, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը Գերմանիայի օրենսդիր մարմնում դրական ազդակ էր Հայաստանի հետ հարաբերությունների հետագա զարգացման առումով, իսկ այս ներուժի օգտագործումը՝ մեծ հնարավորություն ՀՀ արտաքին քաղաքականության տեսանկյունից:

Քաղաքացության մեջ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել հետևյալը.

1. ՀՀ-ԳԴՀ երկկողմ քաղաքական փոխհարաբերությունների առաջին շրջանը կրում էր առավելապես ճանաչողական բնույթ: Գերմանական կողմը միտված էր առավել խորը պատկերացում կազմելու Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացների վերաբերյալ, իսկ հայկական կողմն առաջին քայլերն էր անում եվրոպական խոշոր ուժային կենտրոններից մեկի հետ բարեկամական հարաբերությունների հաստատման ուղղությամբ:

2. Հաշվի առնելով Հարավային Կովկասի նկատմամբ Գերմանիայի միասնական դիրքորոշումը, պետք է փաստել, որ, չնայած տարածաշրջանի երեք երկրների հետ էլ Գերմանիան փորձում էր վարել հավասարակշռված քաղաքականություն, տարածաշրջանի երկրներից առավել շահեկան դիրքերում

էր հայտնվել Վրաստանը՝ օգտագործելով մի կողմից Ղարաբաղյան հիմնախնդրի գործոնը, իսկ մյուս կողմից էլ՝ ակնհայտ ձգտումը հաստատելու սերտ հարաբերություններ Գերմանիայի հետ:

3. Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման սկզբնական շրջանում բարդությունները պայմանավորված էին նաև դեսպանությունների մակարդակով դիվանագիտական շփումների բացակայությամբ և ՀՀ նոր ձևավորված դիվանագիտական կորպուսի սակավ փորձառությունով:

4. Արևմտյան Եվրոպայի երկրների հետ Հայաստանի երկկողմ հարաբերությունները կառուցվում էին՝ հաշվի առնելով Հայաստանի առջև կանգնած հետևյալ քաղաքական և տնտեսական նպատակները՝ երկրի անկախության ամրապնդում, ժողովրդավարական կառույցների ստեղծմանն աջակցություն, Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ Գերմանիայի բարենպաստ դիրքորոշման ապահովում, Եվրոպական կառույցներին Հայաստանի ինտեգրման օժանդակություն, տնտեսական համակարգի վերափոխմանն օժանդակություն: Այս համատեքստում Գերմանիայի հետ հարաբերությունները կարևորվում էին ոչ միայն Գերմանիայի դինամիկ զարգացող տնտեսական գործոնի, այլև Գերմանիան՝ որպես Եվրոպական Միության մաս և Եվրոպական ընտանիքում վճռական դերակատարություն ունեցող քաղաքական սուբյեկտի:

5. 1999թ. հոկտեմբերի 27-ի իրադարձություններից հետո ՀՀ-Գերմանիա հարաբերությունները կանգնեցին նոր մարտահրավերների առջև. պաշտոնական Երևանը կարիք ուներ վերականգնելու Հայաստանի նկատմամբ կորսված վստահությունը Գերմանիայում և տրամադրել հետագա համագործակցության զարգացման և խորացման կայուն երաշխիքներ:

6. Երկկողմ հարաբերություններում նոր փուլի մեկնարկը կարելի է համարել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման շրջանը, ով առանձնակի նշանակություն դարձրեց և նոր լիցքեր հաղորդեց հայ-գերմանական հարաբերություններին:

7. Չնայած Գերմանիան չունի հստակ ռազմավարական նպատակներ տարածաշրջանում և չունի Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործում անմիջական դերակատարություն, սակայն Գերմանիան աջակցում է Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղաղության և կայունության պահպանմանը:

8. Գերմանական կողմը, թեև հետաքրքրված էր Հարավային Կովկասում տեղի ունեցող իրադարձություններով, մասնավորապես՝ տարածքային հակամարտությունների խաղաղ կարգավորմամբ, գերմանական բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներում, կարծես թե էական տարբերություններ չէին նկատվում հակամարտության կարգավորման վերաբերյալ և չէին ցանկանում շեղվել ԵՄ ընդհանուր դիրքորոշումներից:

9. Խոսելով հայ-գերմանական միջխորհրդարանական հարաբերությունների մասին, անհրաժեշտ է ընդգծել Գերմանիայի դերը երկու առումով՝ Գերմանիան որպես տնտեսապես հզոր, կայացած ժողովրդավար խորհրդարանական երկիր և Գերմանիան որպես Եվրամիության կորիզը կազմող երկիր, որի հետ խորհրդարանների մակարդակով համագործակցության ակտիվացումը դրական արդյունք ունի տարբեր ոլորտներում հայ-գերմանական համագործակցության վրա:

10. Ուսումնասիրվող ժամանակահատվածում ամբողջապես չեն իրացվել հայ-գերմանական միջխորհրդարանական կապերում բոլոր հնարավորությունները. գերմանական կողմը հնարավորություն է տալիս զարգացնելու համագործակցությունը ինչպես միջխորհրդարանական բարեկամական խմբերի, այնպես էլ՝ առանձին պատգամավորների միջոցով: Համագործակցության ընդլայնման լայն հեռանկարներ կան նաև Գերմանիայի դաշնային հողերի Լանդթագերի հետ:

11. Հայ-գերմանական տնտեսական համագործակցությունը ՀՀ անկախացման սկզբնական շրջանում աչքի չի ընկել ակտիվության բարձր մակարդակով, և ընդհուպ մինչև 2000-ական թթ. սկիզբը դրսևորվել է հիմնականում Գերմանիայի կողմից Հայաստանին տրամադրվող ֆինանսական և տեխնիկական օժանդակության տեսքով: Չնայած որ այն մեծ օժանդակություն էր ՀՀ տնտեսությանը անցումային շրջանի վերափոխումների իրականացման գործընթացում, սակայն բավարար չէր արդյունավետ առևտրաշրջանառության և գործընկերային հարաբերությունների ձևավորման համար:

12. 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հզոր հարվածի արդյունքում ՀՀ տնտեսության խոր անկմանը հաջորդած տնտեսական աճի ցուցանիշների վերականգնումը և ներդրումային դաշտի բարելավմանն ուղղված միջոցառումների շարունակական իրականացումը հնարավորություն տվեցին ավելի խորացնել Գերմանիայի հետ արդեն իսկ սկզբնավորված արդյունավետ համագործակցության հիմքերը և լիարժեք օգտագործել դրա համար առկա խոստումնալից ներուժը:

13. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գերմանիայի արտաքին քաղաքականության հենասյուներից է մշակութային քաղաքականությունը, իսկ Հայաստանն աչքի է ընկնում հարուստ մշակութային ժառանգությունով. այս փաստը կանխորոշիչ դեր է ունեցել երկկողմ մշակութային առնչությունների զարգացման գործում:

14. Բարձրագույն կրթության և գիտության բնագավառներում գերմանական կողմից ընձեռված հնարավորությունները պարարտ հող են նախապատրաստել հայ-գերմանական գիտակրթական համագործակցության հետագա զարգացման համար:

15. Ի տարբերություն հայկական սփյուռքի մաս կազմող մյուս խոշոր համայնքների, Գերմանիայի հայ համայնքը թվաքանակով զիջում է, ինչպես նաև

չկա հստակ վիճակագրություն հայ համայնքի թվի վերաբերյալ: Սա պայմանավորված է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հայերի՝ երկրի ողջ տարածքում սփռված լինելով:

16. Գերմանիայում ստեղծվել է մի ամուր ու կայուն կազմակերպչական կառույց, որը համարձակ քայլերով վերելք է ապրում: Ճիշտ է, հայ համայնքը այնքան էլ մեծ չէ՝ համեմատած թուրքական համայնքի հետ, այնուամենայնիվ, այն բավականին ծանրակշիռ դեր ու ազդեցություն ունի. օրինակ՝ Հայոց ցեղասպանության հարցում այս երկու կողմերի ուժերը, կարելի է ասել, որ գրեթե հավասար էին: Թուրքիան՝ շահագրգռված լինելով անդամակցել Եվրամիությանը, պատրաստ էր գնալ որոշակի զիջումների, ինչը բերում էր նրա դիրքերի թուլացմանը. ստեղծված իրավիճակից տեղի հայերը կարողանում էին օգուտներ քաղել և ամրացնել իրենց դիրքերը:

17. Կարելի է փաստել, որ Գերմանիայի խորհրդարանը դեռևս Հայոց ցեղասպանության տարիներին քաջատեղյակ է եղել դաշնակից Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի հանդեպ տարվող բնաջնջման քաղաքականության մասին, սակայն, չնայած դրան, շուրջ 85 տարի պահանջվեց, որպեսզի Հայոց ցեղասպանության թեման կրկին գերմանական խորհրդարանականների քննարկման առարկա դառնա: Չնայած առանձին խմբակցություններից հնչող խուսափողական կարծիքներին, այն ամուր հող նախապատրաստեց հաջորդ փուլի զարգացման համար:

18. 2000-ական թվականներից Գերմանիայի հասարակական շրջանակներում մեծ պահանջարկ կար ոչ միայն Բունդեսթագի քննարկման առարկա դարձնելու Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, մասնավորապես՝ կիրառելով «ցեղասպանություն» եզրույթը, ավելին՝ հանրային շրջանակներում քննարկման առարկա էր դառնում նաև Հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի համապատասխանատվության հարցը: Այն արտացոլվում էր նաև Գերմանիայում լույս տեսնող գիտական հրապարակումներում:

19. 2005թ. հունիսի 16-ի Բունդեսթագի ընդունած Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևում, թեպետ չէր օգտագործվում «ցեղասպանություն» եզրույթը, այն բավականին լավ արտացոլում էր 1915թ. կատարված իրադարձությունները:

20. Հայոց ցեղասպանության հարցը երբեմն եղել է քաղաքական ազդեցության գործիք Գերմանիայի ձեռքին՝ երկրում թուրքական համայնքի և Թուրքիայի իշխանությունների վրա որոշակի ներգործություն ունենալու հարցում:

21. Հայաստանի անկախության առաջին տարիներից սկսած Գերմանիան ամեն կերպ դեմ էր արտահայտվում Մեծամորի ատոմակայանի վերագործարկմանը՝ դիտարկելով այն որպես տարածաշրջանային անվտանգության սպառնալիք: Չնայած այդ փաստին, 1990-ական թթ. կեսերին

Գերմանիան առաջարկով էր հանդես գալիս Հայաստան տեղափոխել Գերմանիայի ատոմակայաններում առաջացած ատոմային թափոնները, ինչը ինքնին տրամաբանական չէր, քանի որ Հայաստանն ի վիճակի չէր տվյալ սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում հայտնված տարիներին վերամշակել այդ թափոնները:

22. Չնայած այն փաստին, որ Գերմանիան մշտապես արտահայտվում է Հարավային Կովկասում կայունության և այստեղ հակամարտությունների խաղաղ կարգավորման օգտին, վերջինս, որպես ՆԱՏՕ-ի անդամ և Թուրքիայի դաշնակից երկիր, վերջինիս էր հանձնել Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո գերմանական զինանոցներում մնացած զենք-զինամթերք, որը կիրառվել է հայկական կողմի դեմ Արցախյան պատերազմում: Այս տեսանկյունից քաղաքական անհեռատեսության դրսևորում ենք համարում այն փաստը, որ հայկական կողմը պաշտոնական քննարկման առարկա չի դարձրել այս հարցը:

Ատենախոսության հիմնադրույթները արտացոլված են հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. Թովմասյան Մ., Գերմանիայի հայ համայնքը և նրա առջև ծառայած հիմնական խնդիրներն արդի փուլում, Տարածաշրջան և աշխարհ, հ. 2, Եր., 2022, էջ 44-48:

2. Թովմասյան Մ., Հայոց ցեղասպանության վերաբերյալ դիսկուրսը գերմանիայի ներքաղաքական շրջանակներում (1999-2015 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Եր., 2021, հ. 1 (34), էջ 3-15:

3. Թովմասյան Մ., ԳԴՀ դիրքորոշումը Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ (1991-2008 թթ.), «Գիտական Արցախ», հ. 2(5), Եր., 2020, էջ 34-44:

4. Թովմասյան Մ., Հայ-գերմանական տնտեսական համագործակցությունը 1991-2008 թթ., ԵԴՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2015թ. տարեկան գիտական նստաշրջանի նյութեր, հ. 1.6 (16), Եր., 2016, էջ 63-68:

5. Թովմասյան Մ., Հայ-գերմանական միջխորհրդարանական հարաբերությունները 1991-2008 թթ., «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», հ. 132.6, Եր., 2010, էջ 13-23:

6. Թովմասյան Մ., Երկկողմ հարաբերությունների զարգացումը Հայաստանի և Գերմանիայի միջև, Հայ-գերմանական հարաբերությունների 30 տարի, Եր., 2022, 496 էջ:

7. Tovmasyan M., Die Entwicklung der bilateralen Beziehungen zwischen Deutschland und Armenien, 30 Jahr diplomatische Beziehungen zwischen der Bundesrepublik Deutschland und der Republic Armenien, Eriwan, 2022, 407 Seiten.

ТОВМАСЯН МАРТИН ГАГИКОВИЧ

ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С ФЕДЕРАТИВНОЙ РЕСПУБЛИКИ
ГЕРМАНИЯ В 1991-2008 ГГ.

ДИССЕРТАЦИЯ НА СОИСКАНИЕ УЧЕНОЙ СТЕПЕНИ КАНДИДАТА
ИСТОРИЧЕСКИХ НАУК ПО СПЕЦИАЛЬНОСТИ 23.00.04 - “МЕЖДУНАРОДНЫЕ
ОТНОШЕНИЯ”

РЕЗЮМЕ

Актуальность темы диссертации: Европейское направление имеет особое значение в многовекторной внешней политике Республики Армения. В этом контексте особое значение приобретают отношения с Федеративной Республикой Германия, которая составляет ядро Европейского Союза. Развитие отношений с Германией имеет особое значение для Республики Армения, которая с первых лет независимости внимательно следила за событиями и процессами, происходящими на Южном Кавказе, в том числе в Армении. Германия играет значительную роль в мировой политике, сближение отношений с которой отвечает прежде всего интересам Республики Армения.

Исследуемая тема весьма актуальна и с точки зрения внешней политики Республики Армения. Германия занимает достаточно взвешенную позицию в отношении армяно-азербайджанского конфликта в целом и карабахской проблемы в частности. В Германии существует довольно большая армянская община, имеющая большой потенциал для применения влиятельного лоббирования в стране. С другой стороны, отношения Армении с Евросоюзом в последние годы активно развиваются, поэтому изучение отношений с одним из главных центров силы этой организации также необходимо в этом плане.

Основной целью диссертации является изучение армяно-германских отношений, которые являются важной частью европейского направления внешней политики Республики Армения в течение рассматриваемого периода.

В диссертации освещаются исторические и политические основы становления и развития армяно-германских отношений, принципы их построения, динамика развития, изучается армяно-германское сотрудничество в следующих сферах: политической, торгово-экономической, а также в сферах образования, науки и культуры, а также оценивает достигнутые результаты в развитии двусторонних отношений в контексте наблюдения за перспективами, а также сценарного анализа дальнейшего развития двусторонних отношений.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы.

Первая глава работы **“Процесс установления и развития политических отношений между Республикой Армения и Федеративной Республикой Германия”** была посвящена изучению процесса становления и развития политических отношений между Республикой Армения. Были упомянуты некоторые важные вопросы от установления дипломатических отношений до повестки дня двусторонних политических отношений. В основу исследования мы постарались положить основы интерпретации динамики развития. В этой главе мы также представили основные принципы формирования политики и позиции официального Берлина в карабахской проблеме.

Вторая глава диссертации под названием **“Области армяно-германского сотрудничества”** была посвящена изучению вопросов, охватывающих различные сферы двусторонних отношений между Арменией и Германией. В частности, в первом подразделе **“Армяно-германское торгово-экономическое сотрудничество”** мы говорили о двустороннем товарообороте, различных сферах, охватывающих экономические отношения. Во втором подразделе этой главы **“Армяно-германские межпарламентские отношения”** мы говорили о существующих парламентских связях между двумя странами. Следует отметить, что Бундестаг выполняет важные функции во внешней политике Германии. Республика Армения и сегодня является парламентской республикой, поэтому сложившиеся между двумя странами традиции парламентской дипломатии могут создать хорошие предпосылки для дальнейшего развития в этом направлении.

Не менее важными мы считаем и культурные связи, которые могут создать хорошие предпосылки для развития политических отношений. Поэтому третий подраздел второй главы нашей работы под названием **“Армяно-германское сотрудничество в области культуры, образования и науки”** был полностью посвящен изучению двусторонних культурных связей.

В первой части третьей главы работы **“Армяне в Германии и процесс признания Геноцида армян”**, озаглавленной **“Армянская община Германии”**, мы представили проблемы, связанные с армянской общиной Германии. Особое внимание мы уделили вопросу о том, как армянская община Германии влияет на развитие отношений РА-Германия. Во второй подглаве **“Процесс признания Геноцида армян в парламенте Германии”** мы рассказали о процессе признания Геноцида армян в Германии и дискуссиях по этому поводу в различных органах Германии. Геноцид армян был признан в парламенте Германии в 2016 году, но до этого вопрос прошел долгий процесс внутривнутриполитических дискуссий.

MARTIN GAGIK TOVMASYAN

RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE FEDERAL
REPUBLIC OF GERMANY IN 1991-2008
DISSERTATION UNDER IG.00.04 – “INTERNATIONAL RELATIONS” ASPIRING
TO EARN PHD IN HISTORY

Summary

The relevance of the dissertation topic: The European direction is of particular importance in the multi-vector foreign policy of the Republic of Armenia. In this context, relations with the Federal Republic of Germany, which forms the core of the European Union, are of special importance. The development of relations with Germany is of special importance for the Republic of Armenia, which was closely following the developments and processes taking place in the South Caucasus, including in Armenia from the first years of independence. Germany has a significant role in world politics, with which the rapprochement of relations is primarily in the interests of the Republic of Armenia.

The researched topic is also very relevant from the point of view of the measures of the current agenda of the foreign policy of the Republic of Armenia. Germany has a fairly balanced position regarding the Armenian-Azerbaijani conflict in general and the Karabakh issue in particular. There is quite a large Armenian community in Germany, which has a great potential to apply influential lobbying in the country. On the other hand, in recent years, Armenia's relations with the European Union have been actively developing, so the study of relations with one of the main power centers of this organization is also necessary in this regard.

The main aim of the dissertation is the study of Armenian-German relations, which are an important part of the European direction of RA foreign policy, in the period 1991-2008.

The dissertation highlights the historical and political foundations of the formation and development of Armenian-German relations, the principles that build them, the dynamics of development, studies the Armenian-German cooperation in the following fields: political, trade-economic, as well as in the fields of education, science and culture, and evaluates the achieved results in the development of bilateral relations in the context of observing perspectives, scenario analyzes are performed on the further development of bilateral relations.

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a list of used sources and literature.

The first chapter of the work, "**The process of establishment and development of political relations between the Republic of Armenia and the**

Federal Republic of Germany", was devoted to the study of the process of the formation and development of political relations between the Republic of Armenia and the Federal Republic of Germany. Reference was made to certain important issues from the establishment of diplomatic relations to the agenda of bilateral political relations. We tried to base the study on the foundations of interpretation of development dynamics. In this chapter, we also presented the main principles shaping the policy and position of official Berlin in the Karabakh problem.

The second chapter of the dissertation, entitled "**Areas covering Armenian-German cooperation**", was devoted to the study of issues covering various areas of RA-Germany bilateral relations. In particular, in the first sub-chapter, "**Armenian-German trade and economic cooperation**", we talked about the bilateral trade circulation, various areas covering economic relations. In the second sub-chapter of this chapter, "**Armenian-German inter-parliamentary relations**", we talked about the existing parliamentary ties between the two countries. It should be noted that the Bundestag has important functions in Germany's foreign policy. The Republic of Armenia is still a parliamentary republic today, so the traditions of parliamentary diplomacy formed between the two countries can create good prerequisites for further developments in this direction.

We also consider cultural ties to be no less important, which can create good prerequisites for the development of political relations. Therefore, the third sub-chapter of the second chapter of our work entitled "**Armenian-German cooperation in the fields of culture, education and science**" has been completely devoted to the study of bilateral cultural relations.

In the first part of the third chapter of the work, "**Armenians in Germany and the Armenian Genocide Recognition Process**", entitled "**The Armenian Community of Germany**", we presented the problems related to the Armenian community in Germany. We paid special attention to the issue of how the Armenian community in Germany affects the development of RA-Germany relations. In the second sub-chapter, "**The Process of Recognition of the Armenian Genocide in the German Parliament**", we talked about the process of recognition of the Armenian Genocide in Germany and the discussions on this matter in various German bodies. The Armenian Genocide was recognized in the German parliament in 2016, but before this the issue went through a long process of internal political discussions.

A handwritten signature in black ink, appearing to be 'V. P. ...', written in a cursive style.